

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հ. Ա. Ադամյան

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման
կենտրոնի մեթոդիստ, գնահատող-մանկավարժ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հանդուրժողականություն, հանրակրթական դպրոց, ներառական կրթություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, դիրքորոշումներ, կարծրատիպեր:

Երկար տարիների ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց նկատմամբ դրսևորված նախապաշարմունքը, անտարբերությունն ու վախը հանգեցրել են նրանց մեկուսացմանը և խոչընդոտել նրանց զարգացմանը: Մեկուսացման պատճառով մարդիկ, չունենալով բավարար գիտելիքներ, վախենում են հաշմանդանություն կամ հատուկ կարիքներ ունեցող մարդկանցից՝ բաժանելով հասարակությունը «հիվանդների» և «առողջների», ինչը հակասում է հումանիզմի /մարդասիրության/ մասին պատկերացումներին [4]:

2005թ-ի մայիսի 25-ին ընդունվեց <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին ՀՀ օրենքը>>: Ըստ սույն օրենքի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ է համարվում նա, ում ֆիզիկական և/կամ/ մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները

խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման: Ըստ ՀՀ «Կրթության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով» [1]: Ներառական կրթությունը /ֆրանս. *inclusif* - ներառել բառից, լատ. *include* - ներառում, ներգրավվում բառերից/ հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար՝ երեխաների տարբեր կարիքներին հարմարվելու ձևով, ինչը ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մուտքը դեպի կրթություն: Այն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համատեղ ուսուցումն է իրենց տարեկիցների հետ՝ նույն դասարանում, այլ ոչ թե հատուկ դպրոցներում կամ առանձնացված խմբերում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ համագործակցության փորձը նպաստում է աշակերտների մեջ ակտրուիստական


վարքագծի ձևավորմանը ու ապրումակցման և մարդկայնության կարողությունների զարգացմանը: Երեխաները դառնում են ավելի հանդուրժող միմյանց նկատմամբ, սովորում են ընկալել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ ինչպես հասարակության սովորական անդամների: Իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներգրավվումը նորմալ զարգացող տարեկիցների միջավայր, մեծացնում է նրանց շփման փորձը, ձևավորում է հաղորդակցման, միջանձնային փոխազդեցության հմտություններ [5]:

2025 թվականից Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտն անցնելու է համընդհանուր ներառման, այսինքն՝ հանրակրթական բոլոր դպրոցներում իրականացվելու է ներառական կրթության ծրագիրը, որի արդյունավետության գնահատումը կարևոր և հրատապ է համարվում այս ծրագրի իրականացմանը աջակցող կազմակերպությունների կողմից: Միաժամանակ, պետք է նշել, որ առկա գնահատումները հիմնականում ուղղված են գործընթացի արտաքին կողմին՝ դպրոցում համապատասխան պայմանների առկայություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանների, ծրագրերի առկայություն: Սակայն կրթական գործընթացի մասնակիցների հանդուրժողականության դրսևորումները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ քիչ են ուսումնասիրված [2]: Վերլուծելով կրթության և ընդհա-

նուր առմամբ հասարակության ներառման ընդլայնման հարցը՝ հարկավոր է «ներառման» գործընթացի զարգացման մեջ նշել այնպիսի հասկացության հսկայական դերը, ինչպիսին է հանդուրժողականությունը: Ներառական կրթությունը կարող է ապահովել հանդուրժողականությունը աշակերտների շրջանում, քանի որ ուղղված է կրթական գործընթացում առկա խոչընդոտների հաղթահարմանը, սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների նկատմամբ հասարակության կարծրատիպերի փոփոխությանը [3]:

Ներկայացնենք Հայաստանի Հանրապետության 8 դպրոցներում/որոնցից 4-ում իրականացվում է ներառական կրթության ծրագիրը/ իրականացրած հետազոտության արդյունքները: Հետազոտությանը մասնակցել են դպրոցների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող VIII և IX դասարանների աշակերտները՝ 80 հոգի /10 աշակերտ յուրաքանչյուր դպրոցից/, հետազոտության մասնակից աշակերտների ծնողները՝ 80 հոգի /10 ծնող յուրաքանչյուր դպրոցից/, ուսուցիչները՝ 80 հոգի /10 ուսուցիչ յուրաքանչյուր դպրոցից/:

Ուսուցիչների և աշակերտների հաղորդակցական գործընթացում դրսևորած հանդուրժողականության մակարդակը կյանքի տարբեր իրավիճակներում և ուսման մեջ պարզելու համար կիրառել ենք Վ.Վ. Բոյկոյի հաղորդակցական հանդուրժողականության հարցարանը: Ընդհանուր հաղորդակցական հանդուրժողականության մակարդակների տոկոսային բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 1- ում:



Հաղորդակցական տոլերանտություն		բացարձակ մերժում	ցածր աստիճան	միջին աստիճան	բարձր աստիճան
ներառական դպրոցի	ուսուցիչներ	0	0	28%	73%
	աշակերտներ	0	0	48%	53%
հանրակրթական դպրոցի	ուսուցիչներ	0	0	43%	58%
	աշակերտներ	0	5%	68%	50%

Նկար 1

Ընդհանուր հաղորդակցական հանդուրժողականության մակարդակների տոկոսային բաշխվածությունը

Համաձայն աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների՝ ուսուցիչների և աշակերտների հաղորդակցական հանդուրժողականության մակարդակը 2 դպրոցներում էլ ընդհանուր առմամբ համարվում է բավարար, ընդ որում՝ ներառական դպրոցի ուսուցիչների 73%-ի, աշակերտների 53%-ի և հանրակրթական դպրոցի ուսուցիչների 58%-ի, աշակերտների 50%-ի կողմից, համապատասխանաբար, դիտվել է հաղորդակցական հանդուրժողականության բարձր մակարդակ:


Նկար 1. Ֆիզիկական կամ հոգեկան դժվարություններ ունեցող մարդկանց նկատմամբ հանդուրժողականության միջին ցուցանիշների համեմատությունը /որքան բարձր է միջին արժեքը, այնքան ցածր է հաղորդակցական տոլերանտության մակարդակը/:

Նկար 1-ում երևում է, որ Բոյկոյի հաղորդակցական հանդուրժողականության /մեր հետազոտության համար առավել կարևոր/ 8-րդ բաղադրիչում ներառական կրթության գործընթացում ընդգրկված ուսուցիչներն ու աշակերտները դրսևորել են հանդուրժողականության առավել բարձր մակարդակ՝ համեմատած հանրակրթական դպրոցների ուսուցիչների և աշակերտների: Ընդ որում՝ հոգեկան կամ ֆիզիկական դժվարություններ ունեցող իրենց գործընկերների կամ տարեկիցների նկատմամբ ավելի հանդուրժող են մարզերի ներառական դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները: Սա կարելի է բացատրել նրանով, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում երեխաներն ու ուսուցիչներն ամեն օր շփվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող երեխաների հետ և նրանց համար խորթ չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հետ հաղորդակցվելը, մտերմություն ամելը, նրանց կյանքի և ուսման մասին տեղեկացված լինելը: Ֆիզիկական և հոգեբանական խնդիրներ ունեցող մարդկանց նկատմամբ հանդուրժողականության դրսևորման ամենաբարձր մակարդակը գրանցվել է մարզերի դպրոցների ուսուցիչների և աշակերտների միջև: Մարզերում ամենօրյա շփումն ու հաղորդակցումը ավելի ինտենսիվ է՝ համեմատած եր-

ևանի դպրոցների, և երկրորդ՝ այստեղ բոլորը ճանաչում են միմյանց:

Կրթական տարբեր իրավիճակներում ուսուցչի հանդուրժողականության մակարդակը գնահատելու համար կիրառել ենք *ուսուցիչների հանդուրժողականության ինքնագնահատման հարցարանը*: Տվյալ մեթոդիկայով իրականացրած հետազոտության ընդհանուր արդյունքները ներկայացված են նկար 2-ում /որքան բարձր է միջին արժեքը, այնքան ցածր է ուսուցչի տոլերանտության մակարդակը/:



Նկար 2. Կրթական իրավիճակներում ուսուցիչների հանդուրժողականության դրսևորման միջին ցուցանիշները

Ինչպես երևում է նկար 2-ում ներկայացված տվյալներից, ուսուցիչների հանդուրժողականության մակարդակը 2 դպրոցներում էլ ընդհանուր առմամբ համարվում է բավարար: Ընդ որում ուսուցիչների 67%-ի կողմից դիտվել է հանդուրժողականության բարձր աստիճան: Գրեթե բոլոր ուսուցիչները /90%/ նշել են, որ *միշտ հիշում են երեխայի անհատականության մասին*, սակայն «Ես խոչընդոտում եմ ինձ ոչ համակրելի և անընդունակ սովորողների ակտիվ մասնակցությանը կուլեկտիվ աշխատանքներում» հարցին

նրանցից 10%-ը նշել է «այո» պատասխանը, 10%-ը՝ «երբեմն» պատասխանը, իսկ «*Լավ ու վատ* աշակերտների հետ իմ հարաբերությունների ոճը տարբերվում է» պնդմանը համաձայնել են ուսուցիչների մոտ 20%-ը: Ուսուցիչների 70%-ը համաձայնվել է «Կրթություն բոլորի համար» արտահայտության, իսկ 20%-ը նշել է «երբեմն» պոնակում: Սա կարելի է բացատրել նրանով, որ թեև ուսուցիչները բազմիցս վերապատրաստվել են «աշակերտակենտրոն ուսուցման» մեթոդներով ուղղումը /որի թիվ մեկ սկզբունքը՝ աշակերտի

անհատականության մասին հիշելն է/ նրանցից ոմանք դեռևս ունեն կարծրացած դիրքորոշումներ կրթական գործընթացի կազմակերպման և կրթության մասնակիցների նկատմամբ: Կան ուսուցիչներ, ովքեր բաժանում են աշակերտներին <<լավերի>> ու <<վատերի>>, <<ընդունակների>> և <<անընդունակների>>, մոտեցում, որը հակասում է կրթության ոլորտում ՀՀ կողմից որդեգրած *Աշակերտականորոն ուսուցման* գաղափարախոսությանը, ինչպես նաև ներառական կրթության սկզբունքներին:

Ներկայացված մեթոդիկայով իրականացրած հետազոտության արդյունքների վիճակագրական վերլուծությունը մեզ ընձեռեց կրթական գործընթացում ներակառական և ոչ ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչների հանդուրժողականության դրսևորումներում արձանագրել տարբերություններ: Այսինքն, կրթության գործընթացում ուսուցիչների դրսևորած հանդուրժողականության մակարդակը զգալիորեն տարբերվում է՝ պայմանավորված դպրոցում ներառական կրթություն իրականացնելու կամ չիրականացնելու փաստից:

Աշակերտների հետ անցկացրած հարցումից ստացված արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրեց հետևյալ հիմնական եզրահանգումների.

- Աշակերտների մեծամասնությունը դեմ չէ, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան նստի իր կողքին /79%/:

- Աշակերտների կեսից ավելին


կարծում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կարող են նոր ընկերներ ձեռք բերել և շահագրգիռ են շատ բաներ անել ինքնուրույն /63%/:

- Աշակերտների ավելի քան 2/3-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային կիրավորի իր տարեդարձի երեկույթին /38%/:

- Աշակերտների 95%-ը կապառանքի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային՝ /օրինակ՝ ծաղրի ենթարկվելու դեպքում/:

- Աշակերտների մեծամասնությունը կարծում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կարող են սովորել հանրակրթական դպրոցում բոլորի հետ միասին /88%/:

Համատեղ ուսուցումը հանրակրթական դպրոցում հնարավոր են համարել ներառական դպրոցի ուսուցիչների 74%-ը, իսկ հանրակրթական դպրոցի ուսուցիչների՝ 56%-ը: Ներառական դպրոցի ուսուցիչների 12%-ը գտել է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսուցումը հանրակրթական դպրոցում հնարավոր չէ, իսկ 14%-ը չի կարողացել պատասխանել տվյալ հարցին: Հանրակրթական դպրոցի ուսուցիչների 24%-ը դեմ է համատեղ ուսուցմանը, իսկ 20%-ը մշել է <<չգիտեմ>> տարբերակը: Տվյալները պատկերավոր դարձնելու համար այն ներկայացրել ենք դիագրամի տեսքով /տե՛ս նկար 3/:



Նկար 3. Համատեղ ուսուցման նկատմամբ ուսուցիչների դիրքորոշումները

Այսինքն, կարող ենք ասել, որ ներառական կրթությունը էական ազդեցություն է ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ ուսուցիչների դիրքորոշումների վրա:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ հանգեցրեց հետևյալ եզրահանգումներին.

- Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ուսուցիչների և աշակերտների հաղորդակցական հանդուրժողականության մակարդակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ ավելի բարձր է, քան ներառական կրթություն չիրականացնող դպրոցներում:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ ներառական և հանրակրթական դպրոցների ուսու-

ցիչների, աշակերտների և ծնողների հիմնական դիրքորոշումները նշանակալիորեն տարբերվում են. ներառական դպրոցների ուսուցիչների, աշակերտների և ծնողների դիրքորոշումները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ ավելի դրական են, վերաբերմունքն՝ ավելի հանդուրժող:

- Ներառական կրթության պայմաններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների հետ ամենօրյա շփումը, նրանց հետ համատեղ կրթությունը զգալի տարբերություն են մտցնում կրթական կարիք ունեցող տարեկիցների նկատմամբ աշակերտների վերաբերմունքի և դիրքորոշումների, հատկապես՝ գիտելիքի և պատկերացումների մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք, էջ 3-4:

2. Ներառման ուղեցույց՝ կրթություն բոլորի համար, Միավորված ազգերի կազմակերպություն, ՅՈՒՆԵՍԿՕ, Երևան 2007, էջ 10-12:

3. Սալամանկայի հռչակագիր և գործողությունների շրջանակ հատուկ կարիքով երեխաների կրթության մասին, ՄԱԿ, «Հուլիսի կամուրջ» ՀԿ, Երևան 1994, էջ 12-13:

4. Декларация принципов толерантности: утв. резолюцией 5.61 Генеральной конференцией ЮНЕСКО от 16 ноября 1995 г. // Защити меня! -2004.-с. 6

5. Писаревская М. А., Форми-

рование толерантного отношения к детям с ограниченными возможностями здоровья в условиях инклюзивного образования /Методическое пособие/, Новороссийск 2013, 34-48с.

ՇՈՓՈՒՄ

ОСОБЕННОСТИ ТОЛЕРАНТНОГО ПОДХОДА В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ К ДЕТЯМ С НАРУШЕНИЯМИ РАЗВИТИЯ

А. Адамян

методист Ереванского медикопсихологопедагогического
центра оценивания детей

В статье представлены особенности толерантности учащихся средних школ, их родителей и учителей в системе инклюзивного образования, а также проявления особенностей толерантного отношения

участников образовательного процесса к школьникам с особыми образовательными потребностями, в зависимости от наличия инклюзивной образовательной программы.

SUMMARY

FEATURES OF TOLERANT APPROACH IN PUBLIC SCHOOL TOWARDS CHILDREN WITH SPECIAL EDUCATIONAL NEEDS

H. A. ADAMYAN

medical, psychological, pedagogical assessment centre of Yerevan, methodist

The article presents the particular tolerance of school students, their parents and teachers in the system of inclusive education, as well as the manifestation features of tolerant

attitude to the participants in the educational process of students with special educational needs, depending on the availability of inclusive education program.